

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատմենել և տարածել նյուրը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձեռփոխել կամ օգտագործել առկա նյուրը ստեղծելու համար նորը

You are free to:

Share – copy and redistribute the material in any medium or format

Adapt – remix, transform, and build upon the material

ԲԵՆԻԿ Մ. ՎԱՐԴԱՊԵՏ

ՔՐԻՍՏՈՆԵՅԱԿԱՆ ՅԵԿԵՂԵՑՈՒ

ԱՂԱՎԱՂՈՒՄՆԵՐԻՑ

Կ Ա Մ

ՅԵԿԵՂԵՑԻ, ԹԱԳԱՎՈՐ, ՀՈԳԵՎՈՐ

ՀԵՂԻՆՎԱ.Ն.

1927



ԲԵՆԻԿ Շ. ՎԵՐԴԱՊԵՏ

281.6

281.6  
R-40

ՔՐԻՍՏՈՆԵՅԱԿԱՆ ՅԵԿԵՂԵՑՈՒ  
ԱՂԱՎԵԼՈՒԹՆԵՐԻՑ

ԿԱՄ

ՅԵԿԵՂԵՑԻ, ԹԱՎԱՎՈՐ, ՀՈԳԵՎՈՐ

324  
Ա 49/31



ՀԱՅՈՒԹՅՈՒՆԻ ԱՌԱԽԵ ՏՎԱՐԻ

ՊԱՏԵՐ 2351 ԳՐԱԲ. 162 Տ. ՏՎԱՐԻ 5000

## ՔՐԻՍՏՈՆԵՑԱԿԱՆ ՅԵԿԵՂԵՑՈՒ ԱՂԱՎԱՂՈՒՄՆԵՐԻՑ

Մինչեւ Գ. դարի վերջը Ավետարանը քարողչությունն  
անաղարտ եր պահում Ավետարանի և սուտքելական շրջա-  
նի ավանդները:

Քարողիչները հատուկ դասակարգ չեյին կազմում,  
դասակարգային շահերով իրար հետ կապված մարդիկ  
չեյին, այլ ներքին կոչումն զգացող, Քրիստոսի դադա-  
փարները տարածելու վոգեորությամբ լի հավատացյալ-  
ներ:

Ամեն մի հավատացյալ՝ վոր Քրիստոսի հոգին ու-  
ներ, քարողիչ եր: Առաքյալներն ու յերեցները՝ իրքե-  
ավելի բանգետ, ավելի փորձառու անձեր, շրջում եյին  
և ուղղություն տալիս քարողիչներին:

Յեկեղեցական կենտրոնական իշխանություն չը  
կար. քրիստոնեյական համայնքներն ազատ եյին, ան-  
կախ իրարից: Նրանց կապն իրար հետ բարոյական եր.  
Ավետարանն եր կապում նրանց և վոչ թե վորեւ յեկե-  
ղեցական իշխանություն:

Գ. դարու վերջից՝ յերբ հարուստ դասակարգերն  
ել քրիստոնյա յեն դառնում և մանավանդ՝ յերբ քրիս-  
տոնեյությունը հայտարարվում և պետական կրօն,  
Ավետարանի քարողչությունը դառնում և պաշտմն:  
Կոչմանավոր քարողիչները նսեմանցում են, յեկեղեցին  
կազմակերպվում ե, վորպես կենտրոնական իշխանա-  
կան վարչություն, դառնում և հավատացյալների  
համար որենսդիր հեղինակություն. հանդես են դա-  
միս յեպիսկոպոսներ, վոր դլուխ են կանգնում յեկե-

զեցումն և ստեղծումն են հոգևորական դասակարգ պես-  
պես աստիճաններով, պատիվներով, տիտղոսներով և  
հատուկ դասակարգային շահերով:

Դասակարգային շահը պահանջում է յեկեղեցու  
վարիչներից վիջումներ անել հարուստ դասակարգե-  
րին, հեթանոսությանն ու պետության (վորոնց դեմ  
կովում եր Քրիստոսը) ի մնաս քրիստոնեյական սկզբ-  
ռումքների:

Յեզ ահա հետզհետե առաջ են գալիս Ավետարան-  
ների գրության ժամանակ և հետո հավելումներ, աղա-  
վաղումներ Նոր Կտակարանի մեջ:

Առաքյալների և յեկեղեցական անդրանիկ հեղինա-  
կավոր հայրերի անունով թիվվում են կեղծ որենքներ  
ու կանոններ, վորոնք հավատի անունով բռնություն-  
ներ են ժողովրդի հոգիների և տնտեսականի վրա, վո-  
րոնց նպատակը լոկ հոգեոր դասի շահերն եյին:

Քրիստոնեյական գրենթե անծես, պարզ պաշտա-  
մունքը, գործնական կրոնը շահ չեր կարող բերել հոգե-  
վոր դասին: Շահը միայն ծեսերի, արարողություն-  
ների, կախարդությունների հետ ե կամված: Յեզ ահա  
հեթանոսական ծեսերը քրիստոնեյական գունավորու-  
մով դառնում են յեկեղեցու դաշտանք. պաղափարը,  
գործնական կրոնը դառնում ե ծիսական, տեսական,  
վերացական կրոն, նյութական շահաբեր կրոն:

Այս հողի վրա ճիշտ նույն ձևով ե աղավաղվում  
քրիստոնեյությունը, ինչ ձևով աղավաղեց Լամաիզմը  
(բուդդայական վանականությունը) Բուդդայի կրոնը:

Այս դասակարգային շահերի հողի վրա առաջ է  
գալիս յեկեղեցիների կամ ազգային վարչական յեկեղե-  
ցիների մրցումն իրար աիրելու տենչանքով:

Հռովմի յեկեղեցին առաջիննե լինում, վոր քրիս-  
տոնեյական աղաւ յեկեղեցուն տիրելու ձգտումն ե հրա-  
պարակ հանում կեղծ հիմունքներ ստեղծելով Ավետա-

բանից թե՝ Քրիստոսը Պետրոս առաքյալին և հանձնել Աստծո արքայության բանալիները. Նրա վրա և Հիմնըլված՝ վորպես գլխավոր առաքյալի, Քրիստոսի յեկեղեցին. և վորովհետև Պետրոսն և քարոզել Հռոմում և նահատակվել այնտեղ, ապա ուրեմն նրա փոխանորդներըն ել՝ Հռոմի յեպիսկոպոսները, համարվելու յեն դրույ և ուղղություն տվող բոլոր յեկեղեցիների:

Հռոմի յեկեղեցու այս յեսական և ժանտ ձգտումների դեմ՝ իրենց շահերն ու անկախությունը փրկելու համար, վոտքի յեն յենում Անտիոքի, Աղեքսանդրիայի, Բյուզանդիայի, Յերուսաղեմի և այլ յեկեղեցիները, վորոնք բանակովի մեջ մտնելով Հռոմի հետ, աշխատում են ապացուցանել, վոր իրենք ել՝ իրենց ունեցած Հիմունքներով, նույնքան առաքելական են, վորքան և Հռոմի յեկեղեցին և հետեւարար՝ իրավահավասար:

Այս հոդի վրա նյութական հիմունքներ են բերվում, վորոնցով յուրաքանչյուրն իր առաքելականությունն ու ուղղափառությունն ե շեշտում՝ մեղադրելով հակառակորդին շեղման, աղանդավորության մեջ.

Մեկը պարծենում և Պետրոսի զերեզմանով, վոր իր ժուռն ե, մյուսը մի այլ առաքյալի նահատակությունը՝ իր յերկրում:

Հրապարակ են նետվում տեսիլքներ, յերազներ, հրաշքներ, վորոնցով դտնվում են խաչափայտը, գեղարդը, անձեռագործ պատկերը, դաստառակը, Ասավածածնի պատկերը, խաչի բենուները, առաքյալների և յեկեղեցական նշանավոր հայրերի մասունքները, դործածածած առարկաները՝ գոտի, հողաթափ, դավազան, Քրիստոսի ոծման յուղի շներ և այլն: Յեզ բանից դուրս և պալիս, վոր այդ յեզակի շատ առարկաներից շատ յեկեղեցիներն ունեն:

Բացի դրանից նույն տգեղ մրցումը տեղի յեւ ունենում վոչ միայն աղգային յեկեղեցիների մեջ, այլ միե-

նույն աղդի վանքերի մեջ (ինչպես՝ Հայոց Աղթամարի, Սոխ, Եղմիածնի մեջ) :

Նույն իրար տիրելու ձգտումի մեջ մըցումն ե սկսվում  
հանդեսներով, շուքերով, արտաքին փայլով, ժողո-  
վըրդին շըմեցնելու չափ և շքեղ հանդեսներ ու արարո-  
ղությունները դառնում են հաչս ժողովուրդի, միամիա  
ժողովրդի, հավատի ուղղափառության նշան:

Այս նախապարհով ցրվում ե յեկեղեցին այն միու-  
թյունը մարդկանց մեջ, ինչվոր հավաքել եր կամենում  
Քրիստոսը:

Յեկեղեցիները դառնում են իրար հալածող, կուիզ-  
ների աղբյուր, ոլատերազմների հորդորիչ, չարագոր-  
ծությունների բուն, դավերի դարբնարան, թույների  
գործարան, կեղծիքի արհեստանոց, խարդավանքների  
շահմարան, հալածանքների հեղինակ, դրագարտություն-  
ների վարժարան, հոգիների բանդ, սրբազնություն-  
ների դիմարան (կարդացեք Հռոմի, Հունական յեկեղե-  
ցիների պատմությունը, կարդացեք Բոկաչիո):

Յեկ այս ամենը լոկ դասակարգային տիրապետու-  
թյան և նյութական շահի համար, են ել Քրիստոսի ա-  
նունով:

Մըանից ել մեծ սրբապղծություն կը լինի<sup>o</sup>. սրանից  
ել սոսկովի աղավաղումն կը լինի<sup>o</sup>:

Յեկեղեցու այս մոլար ուղղությանը նպաստում է  
կայսերական իշխանությունը, վոր կաշառելով հոգեւոր  
դասին, դաշնակցում ե նրա հետ և յեկեղեցին դարձնում  
ե իր հիմքերն ամբացնելու գործիք հավատի անունով.  
արածագծորեն հակառակ Քրիստոսի ուսման:

Թե ինչ ե թագավորական կամ կայսերական իշխա-  
նությունը և ինչ հաշիվներով ե միացել յեկեղեցու և  
կղերի հետ և մարդկության մտավոր, տնտեսական,  
քողաքական թշվառությունների աղբյուր դարձել,  
այդ շատ սիրում պատկերավորված ե մի նշանավոր, իտ-

կակտն քրիստոնեյի, Փրանսիական Հոգևոր Հովվի մի տեսիլքի մեջ, վոր նման չե կղերի տեսիլքին, այլ հեղինակի հոգու ստեղծագործությունն և իրականությունից :

Այս շահեւկան տեսիլքը մենք ընթերցողների լուրջ ուշադրությանն ենք հանձնում այստեղ :

«Այդ մի խավար գիշեր եր: Աստղաթափ յերկինքը ժանրացել եր յերկրի վրա, ինչպես սե՝ մարմարի տապանաքարը՝ գերեզմանի վրա:

Վոչ մի բան չեր խանգարում այդ գիշերվա խաղաղությունը. միայն մերթ ընդ մերթ մի տարորինակ, թեթև շուկու նման թռչունների թերերի շարժման, փափում եր գյուղերի և քաղաքների վրա:

Յեկ այդ ժամանակ թանձրանում եր խավարը և մարդկանց հոդին ճնշվում եր ու մի ցուրտ եր սողոսկում նրանց յերակների մեջ:

Մի գահլիճում՝ վոր պաստառած եր սեով և լուսավորված կարմրավուն ջահով, յոթն յերկաթի գահուցքների վրա նստել եյին 7 մարդ, վոր ծիրանի հագուստ ունեյին և թագերով եյին պատկանակած:

Դահլիճի կենտրոնում բարձրանում եր մի գահ, վոր ժարդկանց վոսկորներից եր շինված: Նրա պատվանդանի մտա՝ աթոռակի փոխարեն՝ վոտների համար, ընկած եր խաչափայալ: Գահի առաջ սե փայտից շինված մի սեղան եր դրված, իսկ սեղանի վրա՝ մի մարդկային դանդ և մի անոթ՝ կարմիր, փրփրուն արյունով լի:

Յոթն թագակիրները մտածկուտ և տիտուր եյին յերեամ և նրանց փոս ընկած աչքերի խորությունից մերթ ընդ մերթ կապտավուն բոցերի կայծեր եյին թռչում:

Նրանցից մեկը վեր կացավ, յերերարով մոտեցավ դահլիճն, վոտքը գրեց քառաթեմի վրա:

Նույն վայրկենին նս գրողաց ամբողջ մարմնով և թված եր թէ պատրաստ և ուշաթափավերու: Մյուսներն

անշարժ նայում եյին նրան։ Նրանք չեյին շարժվում .  
բայց ինչ վոր մի ստվեր տարածվում եր նրանց դեմքե-  
րին և վոչ—մարդկային մի ժպիտ ծռմուռ եր նրանց  
շրթունքները։

Նա՝ վոր քիչ եր մնում ուշաթափվի, ձեռքը մեկ-  
նեց, արյունով լեցուն անոթը բռնեց, նրանից լցրեց  
զանդի մեջ և խմեց։

Յեվայդ խմիչքը՝ թվում եր, թե նրան ույժ տվեց։

Նա գլուխը բարձրացրեց և կրծքից մի ճիչ արձա-  
կեց, վոր նման եր խուլ խոմփոցի։

— Թող անիծյալ լինի Քրիստոսը, վոր աշխարհին  
ազատություն բերեց։

Յեվ մյուս թագակիրները միասին վեր կացան և  
միաձայն կրկնեցին նույն ճիչը։

— Թող նզովյալ լինի Քրիստոսը, վոր աշխարհին  
ազատություն բերեց։

Դրանից Հետո նրանք բազմեցին իրենց յերկաթյա-  
դահույքների վրա և նրանցից առաջննն առաց։

— Յեղբայրներ, ի՞նչ անենք, վոր խեղդենք ազ-  
տությունը, վորովհետեւ մեր թագավորությանը վերջ  
կը լինի, յեթե Նա թաղավորե։ Մեր բոլորիս առ-  
ջևը մի խնդիր ե զրված։ Թող ձեզանից ամեն մենքն  
առաջարկություն անի, ինչվոր լավագույն և համա-  
րում։ Իսկ ինչ ինձ ե վերաբերում, ահա իմ խորհուրդը  
մինչև Քրիստոսի աշխարհ դալը ո՞վ կը համարձակվեր  
մեղ հակառակ լինել. Նրա ուսումը մեր կորուստն յե-  
ղամի, յեկենք վոչնչացնենք Քրիստոսի ուսմունքը։

Յեվ բոլորը միասին պատասխանեցին՝ ճիշտ և,  
խջենք Քրիստոսի վարդապետությունը։

Յերկրորդը մոտեցավ գահին, վերցրեց մարդկացին  
զանդը, արյունով լցրեց և առաց։

— Պետք ե ջնջել վոչ միայն կրոնը, այժմ գիտու-  
թյունը, և՛ միտքը, վորովհետեւ դիտությունը ուզամ ե-

ճանաչել այն, ինչվոր մեղ շահ չե և մարդը չը պետք է  
իմանա. իսկ միտքը միշտ պատրաստ ե ծառանալ ույժի  
դեմ:

Յեվ բոլորն ել միասին պատասխանեցին՝ ճիշտ և,  
շնչենք դիտությունն ու միտքը:

Եերբորդն ել այնպես արեց, ինչ վոր առաջին յեր-  
կուսն և ասաց.

— Եերբ վոր մենք մարդկանց նորից անասուն կը  
դարձնենք, նրանցից խլելով և՛ Քրիստոսի կրօնը, և՛ գե-  
տությունը, և՛ միտքը, մենք շատ բան արած կը լինենք.  
բայց ելի մի բան կը մնա:

Անասունը աչքի յե ընկնում վտանգավոր բնազդնե-  
րով և համակրական զզացմունքներով: Անհրաժեշտ ե,  
վոր մի ժողովուրդ մի ուրիշ ժողովրդի ձայնը չը լսի.  
այլապես յեթե նրանցից մեկը կը բողոքի կամ կը մտածի  
շարժվել, մյուսը կը ցանկանա նմանել նրան: Թող գըր-  
սից վոչ մի ձայն չը հասնի մեղ:

Յեվ բոլորը պատասխանեցին՝ ճիշտ և, թող գըրսից  
վոչ մի ձայն չը հասնի մեղ:

Չորրորդն ասաց. — Մենք մեր շահերն ունենք, իսկ  
ուրիշ ժողովուրդներ իրենց շահերն ունեն, վոր մերի-  
նին հակառակ են: Եեթե նրանք միանան մեր դեմ իրենց  
շահերը պաշտպանելու համար, մենք ի՞նչ պետք ե հո-  
կագրենք նրանց:

— Բաժանենք, վորպեսզի մենք թագավորենք:  
Ստեղծենք ամեն մի յերկրամասի, ամեն մի քաղաքի,  
ամեն մի գյուղի համար ուրույն շահեր, վոր հակառակ  
լինին մյուս քաղաքների, մյուս գյուղերի, մյուս յերե-  
րամասերի շահերին:

Այդպիսով ամենքն ել իրար կատեն և չեն ել մտածի  
իրար հետ միանալ մեր դեմ:

Եեվ բոլորը միասին պատասխանեցին՝ ճիշտ և,

պառակտենք, վոր մենք թագավորենք. նրանց միու-  
թյունը կ'սպանի մեղ:

Հինդերորդն յերկու անգամ դանդն արյունով լցրեց,  
յերկու անգամ խմեց և ասաց.

— Յես հավանում եմ այդ բոլոր միջոցներին, նրանք  
բավ են, բայց բավական չեն: Անասուններ ստեղծեցեք,  
տյդ շատ լավ ե, բայց վախեցրեք այդ անասուններին.  
անխնա դատերով, ահարեկող պատիժներով սարսափ  
փռեցեք նրանց վրա, յեթե չեք կամենա, վոր վաղ թե  
ուշ նրանք լափին ձեղ: Դահիճն արժանավոր արքայի ա-  
մենալավ նախարարն ե:

Յեվ բոլորը միասին պատասխանեցին՝ ճիշտ ե, դա-  
հիճն արժանավոր արքայի ամենալավ նախարարն ե:

Վեցերորդն ասաց.

— Յես ընդունում եմ արագահաս, սարսափեցու-  
ցիչ, անխուսափելի պատիժների առավելությունը: Սա-  
կայն պատահում են այնպիսի արիական, այնպիսի հան-  
դուգն հոգիներ, վորոնց համար պատիժը վոչինչ ե:

Յեթե զուք կամենում եք հեշտությամբ կառավարել  
մարդկանց, մեղկացրեք նրանց վավաշուտությամբ: Ա-  
ռաջինությունը վնաս է մեղ, նա ույժ և անհղում: Ավե-  
լի լավ ե հյուծենք նրանց անառակությամբ:

Յեվ բոլորը միասին պատասխանեցին՝ ճիշտ ե,  
հյուծենք ույժը, յեռանդը, արիությունը անսատկու-  
թյամբ:

Այդ ժամանակ յոթներորդը մյուսների նման մի  
գտնդ արյուն խմելով՝ խաչի վրա կանդնեց և տյապիտի  
մի ճառ սկսեց.

— Թող կորչի Քրիստոսը. պատերազմ կյանքի և  
ժահու, հավիտենական պատերազմ նրա և մեր մեջ:

Բայց ինչպե՞ս խլենք նրանից ժողովուրդներին:  
Չո՞ւք փորձ: Հապա թ՞նչ անենք: Լսեցեք ինձ. պետք և

Քրիստոսի քահանաներին կաշառենք յերկրավոր բարիք-ներով, պատիմներով և իշխանությամբ:

Յեվ նրանք Հիսուսի անունով կը հրամայեն հնա-  
զանդել մեղ ամեն բանում, ինչվոր ել մենք անենք, ինչ  
ել վոր հրամայենք:

Յեվ ժողովուրդը կը հավատա նրանց և խղճի մտոք  
կը լոի նրանց և մեր իշխանությունն ավելի կամրանա,  
քան յերբեք յեղել ե:

Յեվ բոլորը միասին պատասխանեցին՝ ճիշտ ե, կա-  
շառենք Քրիստոսի քահանաներին:

Յեվ հանկարծ դահլիճը լուսավորող ջահը հանգավ  
և խմբված յոթն հոգին բաժանվեցին խավարի մեջ:

---

Յեվ արդարին՝ վոր այդ ժամանակ հոկում եր և ա-  
ղոթում խաչի առաջ, ծանուցվեցավ՝ մերձ և իմ որը,  
ազոթիր և վոչ մի բանից մի վախենար:

Յեվ յե՞ մի տեսակ մոխրագույն և թանձր մշուշի-  
մեջ տեսա, ինչպես տեսնում եմ յերկրի վրա մթնշտ-  
պին, մի մերկ, դատարկ, ցուրտ դաշտավայր:

Նրա կենտրոնում բարձրանում եր մի քարածայր,  
վորից կաթիլ առ կաթիլ թափավում եր մի պղտոր ջուր  
և ընկնող կաթիլների թույլ ու խուլ չշուկն եր  
միայն, վոր լավում եր:

Յեվ յոթն արահետ՝ դաշտավայրում դալարմելով  
տանում եյին դեպի ժայռ. իսկ ժայռի մոտ, ամեն մի  
արահետի ծայրին մի-մի քար եր ընկած, ծածկված ինչ-  
վոր մի խոնավ և կանաչավուն բանով, վոր նման եր սո-  
զանի հետքի:

Յեվ ահա արահետներից մեկի վրա յեռ նկատեցի  
ինչ վոր մի ստվեր, վոր դանդաղորեն շարժվում եր:  
Տակավ առ առկավ ստվերը մոտենում եր. յեռ նկատե-  
ցի վոչ յեթե մի մարդու, այլ ինչ վոր մի բան, վոր  
նման եր մարդու:

Այդ ժարդու սրտի տեղում արյան մի բիծ կար:

Նա նստեց խոնավ և կանաչ քարի վրա և նրա մարմար անդամները դողում եյին. դլուխը քարչ դցելով, նա ինքն իրեն դրկեց ձեռքերով, կարծես թե ուղում եր պահպանել իր մեջ ջերմության մնացորդը:

Յեվ մնացած վեց ճանապարհով իրար հետեւից մոտեցան մյուս՝ վեց ստվերները քարաժայորի պատվանդանին:

Յեվ նրանցից ամեն մեկը, դողալով ու կծկվելով՝ նստում եր խոնավ ու կանաչավուն քարի վրա:

Յեվ նրանք մնում եյին այնտեղ լրակյաց և կուցած, կարծես մի ինչվոր անըմբոնելի և տանջող թափիծի ծանրության տակ:

Նրանց լոռւթյունը շատ յերկար եր տևում, չեմ հիշում ինչքան ժամանակ, վորովհետեւ այդ գաշտավայրի վրա յերբեք արև չի ծագում. այնտեղ չը կա՝ վոչ յերեկո և վոչ առավոտ. միայն պղտոր ջրի կաթիլներն են, վոր կաթելով չափում են միտպաղադ, ծանր, հավետենական ժամանակը:

Յեվ այդ տեսարանն այնքան սոսկալի յեր, վոր յեթե Աստված ինձ ույժ չուղարկեր, դժվար թե տանել կարողանայի:

Յեվ մի ինչվոր ընդհատ-ընդհատ շարժումով ստվերներից մինը՝ դլուխը բարձրացնելով, մի ինչ վոր ձայն հանեց, կուրծես քամու սուր և չոր ձայն լիներ, վոր ցնցում եր կմախքի վոսկորները:

Յեվ ժայռից ականջիս հասան այսպիսի խոռոքեր.

— Քրիստոսը հաղթեց, թող նզովյալ լինի նա:

Յեվ մյուս վեց ստվերները ցնցվեցին և բոլորը միամին բարձրացրին դլուխները և նույն սրբապիղը խոռոքերը թռան նրանց կրծքից.

— Քրիստոսը հաղթեց, թող նզովյալ լինի նա:

Յեվ նրանք իսկույն դողացին ավելի ուժգին, մը

շուշն իջավ և պղտոր ջրի հոսանքը վայրկենապես դա-  
դարեց :

Յոթն ստվերները նորից կռացան իրենց գաղտնի  
գրղովմունքի ծանրության տակ և սկսվեց յերկրորդ՝  
առաջվանից ավելի յերկար լուսթյունը :

Ապա նրանցից մեկը քարի վրա նստած մնալով,  
անշարժ, խոնարհած ասաց մյուսներին :

— Ուրեմն ձե՞զ ել նույնը պատահեց, ինչվոր ինձ.  
Ի՞նչ ծառայություն արին մեղ մեր խորհուրդները :

Մյուսը պատասխանեց .

— Գաղափարի հավատը աղատեց յերկիրը :

Յերրորդն ասաց .—Մենք կամենում եյինք բաժա-  
նել մարդկանց, բայց մեր բոնությունը միայն միացընց  
նրանց մեր գեմ :

Չորրորդն ասաց .—Մենք արյուն թափեցինք և  
այդ արյունը մեր գլխին ընկալի:

Հինգերորդը .—Մենք անառակություն սերմանե-  
նեցինք և նա աճեց մեղնում և լափեց մեր վոսկորները :

Վեցերորդը .—Մենք կարծում եյինք թե խեղդե-  
ցինք աղատությունը, մինչդեռ նրա շունչը այրեց մեր  
զորությունը մինչև արմատը :

Այդ ժամանակ յոթներորդ ստվերը կրկնեց .—Քրիս-  
տոսը հաղթեց, թող նզովյալ լինի նա :

Յեվ յետ տեսա թե ինչպես մոտեցավ մի ձեռք, մի  
— Քրիստոսը հաղթեց, թող նզովյալ լինի նա :

Յեվ յետ տեսա թե ինչպես մոտեցավ մի ձեռք, մի  
ժատը թրջեց պղտոր ջրի մեջ, վորի կաթիլները թափ-  
վելով չափում եյին հավիտենական ժամանակը և նշա-  
վակության կնիք դրեց յոթն ստվերներից ամեն մեկի  
ճակատի վրա և այդ՝ հավիտյանս հավիտենից» :

Լամնեյի այս հնարած պատկերը խտացումն ե այն  
չարտագործ դաշնակցության, վոր կապել են աշխարհի

թագավորները և հոգևոր դասը՝ փոխազարձ շահերի հիմունքով Քրիստոսի ուսմունքն աղավաղելու համար:

Այդ շահերի հիմունքով եր, վոր Քրիստոսի գործական բարոյականության վարդապետությունը հոգեվորները դարձրին տեսություն, ծես, աստվածաբանական գիտութուն: Յերյուրվեցան տեսիլքներ, անբնական հրաշքներ, վորոնցով զարհուրեցրին հավատացյալներին, կանգնեցին խարույկներ Քրիստոսի անունով ընդդեմ ազատ մտքի, քննադատական հոգիների:

«Խարույկների յերկյուղը սթափեցնող ե» (դրում և Դալամբերը Վոլթերին) . և այդ «սթափեցնող» վենքով խեղեցին ազատամիտ հավատացյալների խղճի ձայնը:

Ստեղծվեցին նոր մարդարեռություններ: «Ո՞վ է մարդարեյական դուչակություններ անելու արվեստի գոնողը՝ իհարկե առաջին խարերան—մաշեննիկը, վոր պատահեց հիմարին» (Վոլթեր): Յերբ խարերան հիմարին և հանդիպում, այնտեղ մաքուր գաղափարները գառնում են ծիսական կրոն: Հոգենոր դաօք մոռանում ե՝ «Լոչինչ ունիմ և զամենայն ինչ ունիմ»,» առաջելական խոսքը և դադարում ե տանել այն ուսմունքն իր մաքրության մեջ, վորն իր շահերին և սպառնում: Կեղծիքը գառնում և հավատի հիմք: «Քահանաներն այն չեն, ինչվոր կարծում ե ժողովուրդը. նրանց իմաստությունը մեր դյուրահավատությամբն ե ստեղծվում» (Վոլթեր. «Եղիպատ»): Վոլթերի Սալինոզան ասում ե իր տածուն. «Մեր մեջը մնա, յես կարծում եմ, վոր դաւզոյություն չունիք»:

Աղավաղ քրիստոնեյությունը դառնում ե միայն միամիտ հավատացյալների կրոն, վորին չեն հավատում իրենք՝ հոգևորները: Սակայն իրենց շահերի համար չեն դադարում ձեանալ ու քարոզել, ոսուկալի բըռնություններ գործ զնել ազատ մտքի վրա, վոր թշնամի յե իրենց շահերին: Ստեղծվում են յեկեղեցական ո-

թենքներ հետեւալ որինակով. «Քշել, այըել, պատառ-  
ուել, կտրատել, սպանել բոլորին, վորոնք կասեն յերես-  
թնություն» (Յեփիսոսի ժող. կանոն 449 թ.)

Յել այդ սոսկալի հակածարդկային բռնություն-  
ները շարունակվում են դարերով մինչեւ գրեթե մեր  
որերը:

Աստվածարանության մեջ մտնում են այսպիսի  
«մարդարիտներ». Յեկեղեցին Աստծուց իրավունք և  
ստացել հալածել նրանց, վորոնք չեղվում են ճշմարտու-  
թյունից (իհարկե իրենց ըմբռնած). պատժել՝ վոչ մի-  
այն յեկեղեցական պատուհասներով, այլև Փիղիքական  
պատիժներով:

Այդ պատիժներն են՝ բանդ, ծեծ, անդամմահատու-  
թյուն, մահ» (Կլերմոնի աստվածարանություն.  
1904 թ.)

1900 թ. Փարիզի Հոգևորականների մի շարք ժո-  
ղովներում «Քրիստոսի աշակերտները» գոռում եյին՝  
«կեցցե Բարդուղիմյան գիշերը. Բարդուղիմյան գիշերը  
զերազանց գիշերն եր յեկեղեցու և հայրենիքի համար»  
(Բեյնակ):

Յել այդ մահահոտ կանչվուտոցներն ո՞ւմ գեմ ե-  
յին արձակիվում. Ժողովրդի, իր հոգու մաքրությունը  
և իր քրիստոնեյական մաքուր ըմբռնումները պահած. ու  
սղավաղումների գեմ բողոքողների հանդեպ:

Քրիստոնեյական յեկեղեցու այդ «սխրագործաւ-  
թյունները» հիշեցնում են Յեհովայի դաժան պաշտա-  
մունքից մի գեպք:

Սամուելի Բ. գրքում պատմվում է հետեւալը.

Դավիթը կամեցավ Ռւխտի Տապանակը փոխադրել  
Յերուսաղեմ: Տապանակին գիպչելու իրավունք չուներ  
վոչվոք, բացի մի արտօնյալ հոգևոր ընտանիքի ան-  
դամմներից: Տապանակը զնում են մի սայլի վրա, վորին  
յեղներ եյին լծել: Յեղները ճանապարհին սայթաքում

են և քիչ ե մնում տապանակը սայլից վար գլորեն։ Վոմն՝  
Գիզա անունով, տապանակն անկումից փրկելու համար։  
վրա յե հասնում և բռնում։

Այդ գործը համարվեց սոսկալի հանցանք և Աստված  
Գիզային տեղն ու տեղը սպանեց։

Հանեցեք պատմվածքից սպանիչ Աստծու դերը և կը  
մնա այն, վոր դաժան քահանաները Գիզային տեղն ու  
տեղն սպանեցին։

Այսպես սպանում և քրիստոնեյական յեկեղեցին այն  
հավատացյալներին, վորոնք ուզում են Քրիստոսի գա-  
ղակարները հոգևորականների սայլի գլորումից ազա-  
տել։

Յեկ յերբ մարդկության խիղճը բողոքում և այդ  
բարբարոս բռնության դեմ, հոգևոր գասակարգը միշտ  
պատրաստ և արդարանալու թե՛ զոհն եր մեղավոր։

Այս առարկությունն ու վարմունքը հիշեցնում և  
հեթանոս Հունաստանի մի ծիսական արարողություն։

Հունաստանում զոհվելու կենդանին սուրբ եր հա-  
մարվում։ Զոհող քուրմը յենթարկվում եր ծիսական-ձե-  
կական քարկոծումի, վոր համարձակվել և սուրբ կենդա-  
նուն մորթել։ Հետո դատ եր լինում և քուրմն արդարա-  
նում եր նրանով, վոր իրը թե դանակի վրա յե ընկել  
զոհը, մեղավորը դանակն ե և դանակն՝ իրրե հանցա-  
գործ, ծովն եր նետվում։ Կամ թե չե արդարանում եր  
նրանով, վոր իրը թե զոհը ինքն և պատահմամբ ընկել  
դանակի վրա։

Աբբատ Բուրժեն մեթոդիկական բառարանի համար  
հողվածներ գրելիս (1789 թ.) ասում ե, վոր աշխարհն  
ստեղծագործելուց հետո, Աստված ինքն անձամբ սովո-  
րեցրեց նախածնողներին ամեն բան, ինչ վոր նը-  
րանք պետք ե գիտենային։ Նա ինքն ասաց թե ինքն և  
աշխարհի ստեղծողը, ինչպես և մարդու, ինքն և մարդ-  
կանց բարերարն ու որենստում, ինքն ասաց թե մարդուն

իմ պատկերով ևմ ստեղծել, ինքը մի առանձին ընդունակություն է տվել մարդկանց, վոր աճեն բազմանան և այլն:

Մինչդեռ Քրիստոսն ասում է՝ վոչ վոք չի տեսե. Հայր Աստծուն, Աստված Հոգի յե. իսկ Սրբատ Բուրժեն ու նմանները Աստծուն շինում են մարդ և Աղամի ու Յեպայի անձնական զատիքարակ:

Շատ փոքր պիտի յիներ Աստված, յեթե իրեն վայել մեծ գործերը թողած մի մարզու և կնոջ վարժապետ զանար, վորոնք վերջի վերջո Բուրժեններ ծնելին և նրան աված դասերը շարունակելին:

Այս ամեն ազավազումն ու չարակործություն մացրին Քրիստոսի յեկեղեցու և ուսման մեջ կաշառված հոգեոր զանարը իրենց զանակից թաղավորների զենքի զորությունը:

Սակայն անաշխատ շահադործությամբ կուրացած ները չեն ուզում բմբանել թե պատմության ընթացքը ցույց ե տալիս, վոր իրենք չեն աշխարհին և ձմարտության հաղթողները: «Գորտերի մի խումբ նստած, և սահման մեջ և կոկում և թե աշխարհը մեզ համար և բռնեղծված»: (Հեթ. Կելսոս փիլիսոփո): Զեն նկատում թե՝ «մարդկության պատմությունը կրսնական բմբառնումների ստորագությունը պատմությունն և գեղի աշխարհականացումն»: Այդ բնթացքը շարունակվում ե, բայց դեռ չի լրացել», (Բեյնակ):

Գուցե միակ ծառայությունը, վոր անում են յեկեղեցական հոգեոր զանարը իրենց գործելովովով, այդ «լրացումն» արագացնելն ե:

Քաղաքական հեղափոխությունները, կրսնական հեղափոխությունները և բարեփոխությունները, թաղավորների անկումները և նրանց իրավանց սահմանափակումները, Պաղերի և իրենց ընկերների «ստովածային» աթոռներից իջնելը և այլն, այն զորեղ նշան-

ներն են, ինչպես և նորագույն հանրամարդկայիս .  
կայիկեղեցական թարմ հոսանքը, թե այլ «լրացում  
յեկեղեցու և պիտոթյունների աշխարհականացում  
ժողովրդականացումը», Քրիստոսին մոտենալի չառ  
հերու չե:


Յեկ հետեաբար հեռու չե այն որը, յերբ մարդկայ  
այսաջադիմության աներեռույթ մասը պղտոր ջրով նշ  
վակության կնիքն և զնելու նրանց ձակատին և այ  
«հավիտյան, հավիտենից»:

Նրանց մնում և կալիքից առաջ շարժվել զեպի անոն  
պատի քարաժայուը, դեպի պղտոր ջուրը աղվեսաղրուց  
ընդունելու:

Նրանց մնում և իրենց անիծտուեր բերոնով ձայնու-  
ցելու թագակիբներին.

—Քրիստոսը հաղթեց, թող նզովյալ լինի Նա:

Յեկ Քրիստոսը կյանք և մտնելու իր վեհ զաղու ար  
ների փառքով ու փայլով:




ԳԱԱ ՀԻՄՆԱՐԱՐ Գիտ. Գրադ.



220049131

卷之三

22<sup>nd</sup>



5/88

ԳԻՒՆԵ 15 ԿՈՊ.